Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
«26» հուլիսի 2024 թ. թիվ 75 - Ա որոշման

# ԿԱՐԳ
# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1.Սույն կարգով սահմանվում է Թումանյան համայնքի ավագանու անդամներին Թումանյան համայնքի բյուջեով նախատեսված համապատասխան գումարներից ամսական դրամական փոխհատուցում տրամադրելու պայմանները:

2.Թումանյան համայնքի ավագանու անդամները իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իրենց ցանկությամբ և Թումանյան համայնքի ավագանու որոշմամբ կարող են ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

3. Թումանյան համայնքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց տրամադրել դրամական փոխհատուցում,եթե՝

1) Տվյալ ամսում մասնակցել են ավագանու նիստերին և ավագանու մշտական և այլ հանձնաժողովների նիստերին,ստորագրել են իրենց կողմից կայացված որոշումները և նիստի արձանագրությունները,

2) հաշվի առնելով,որ համայնքի բնակավայրերը,որտեղից ընտրվել են ավագանու անդամները տարբեր հեռավորության վրա են գտնվում Թումանյան համայնքի վարչական կենտրոնից,և բնակավայրից կենտրոն ուղիղ երթուղի չկա, տվյալ ամսում ավագանու նիստերին և ավագանու մշտական և այլ հանձնաժողովների նիստերին մասնակցելու դեպքում,ավագանու կողմից կատարված ծախսերի փոխհատուցման գումար սահմանել յուրաքանչյուր կմ համար 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ,

3) հանդիպում է կազմակերպել Թումանյան համայնքի բնակչության հետ,տեղեկացրել համայնքի կատարած աշխատանքների մասին,

4) մասնակցել է ավագանու կողմից քաղաքացիների ընդունելություններին:

4. Թումանյան համայնքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու համար պարտավոր է ներկայացնել իր կատարած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր (բացառությամբ ավագանու նիստերին և ավագանու մշտական և այլ հանձնաժողովների նիստերին մասնակցելու վերաբերյալ):

5. Փոխհատուցումը տրամադրել հաշվի առնելով համայնքի ավագանու անդամների բնակության վայրի հեռավորությունը՝ պարտականությունների կատարման վայրից,ինչպես նաև ավագանու անդամների փոխհատուցում ստանալու ցանկության վերաբերյալ ավագանու խմբակցությունների գրության կամ ավագանու անդամի դիմումի հիման վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**